

բերելու նկատմամբ», — նիշտ եւ նիշտ, կաւելացնենք մենք, ինչպէս այսօր, երբ խորհրդային կառավարական դրամով գործող «Ազատ Եկեղեցին» ուրի հանւեց Էջմիածնի դէմ, երբ «հայ եկեղեցու սպասաւորները գնդակի սպանակալիքի տակ հնարաւորութիւն չունին... մոլորածներին դարձի բերելու»:

ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի վերջին 2 համարներում (դեկտ., յունւար) պատմական-բանասիրական մատուլ վերջացել են «Բագրատ վրդ. Թաւափականի նամակները», շարունակում են *Մ. Աբրահամեանի* «Յիշատակելի Օրեր» յուշերը, *Յ. Քիւրդեանի* «Հին Ճանապարհորդագրութիւններ Հայաստանի եւ Հայոց մասին», *Ա. Գիւլիանդեանի* «Հայ Թաքարական Ընդհարումները Բագւի մէջ», *Մ. Օզանեանի* «Ա. Վառմեան իբրեւ հրապարակագիր» (յունւ.), *Արմէնի* «Հ.Յ.Գ. Պալեաններու մէջ» (յունւ.): Բնութիւն էլ արժէքաւոր պատմական նիւթեր:

Դեկտեմբեր ամսից սկսել է սպւել Յ. Մովսէսեանի կենդանի ու կենցաղային փաստերով յագեցած յուշերը, որ հմտութեամբ գրի է առել *Ա. Աճուրեանը*: Նույն ամսից լոյս է տեսնում եւ *Կ. Մանգալուճու* «Գէպի Կոլու» աշխատութիւնը — ռուսահայոց ազգային կայսածների գրաւման վերաբերող փաստեր ու վաւերագրեր, որոնց մեծ մասը թէեւ ժամանակին հրատարակւած է, բայց ներկայ ամփոփումն ու լուսարանութիւնը օգտակար ծանայութիւն է հայ պատմութեան:

ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼԻՅ

Թիֆլիսի վրացերէն «Մահ-Քորի» պարբերականի 1933թ. № 5ում, վրաստանի համալսարանի ուսուցչատես Լեւոն Մելիքեթբեքը լոյս է ընծայել «Նաղաշ Յովնաթան Աշուղ»-ին նւիրւած մի յօդւած: Մելիքեթբեքը ակադ. Ն. Մառի աչքի ընկնող աշակերտներից է եւ գրադուլ է գլխաւորապէս հայ — վրացական մշակութային կեանքն ու յարաբերութիւնները բնորոշող նիւթերով: 1930թ. նա հրատարակեց վրացերէն լեզուով մի գեղեցիկ աշխատութիւն Մայնաթ Նովայի մասին, որ յառաջ է յիշում մեր աշխատակից Յ. Չալոբեանի «Վէլ»-ում տպւող ուսումնասիրութեան մէջ:

Իր յօդւածում Նաղաշ Յովնաթանի մասին Մելիքեթբեքը տալիս է աշուղի համառօտ կենսագրութիւնը, խօսում է նրա թողած գրական ժառանգութեան մասին, որից նմոյշներ է տալիս վրացերէն թարգմանութեամբ: Բացի այդ, նա հաղորդում է մի շարք նոր տեղեկութիւններ Յովնաթանեանների տոհմի գեղարւեստական գործունէութեան մասին — Նաղաշի, սրա որդի Յակոբի եւ թոռ Յովնաթանի Յովնաթանեանի: Այս վերջինս Մայնաթ Նովային ժամանակակից նշանաւոր նկարիչ էր. նրա վրձինն են պատկանում վրաց արքայական ընտանիքի մի քանի անդամների նկարները, ինչպէս նաեւ Հայաստանի եւ վրաստանի մի շարք եկեղեցիների, ի թիւս որոնց եւ Իովիածնի մայր տաճարի որմանկարները:

Մելիքեթբեքի յօդւածից յետոյ, դուրս է Նաղաշ Յովնաթան

նի լաւագոյն մէկ ոտանաւորը՝ «Գովեմ սրտիւ ուրախական», որ բնագրից քարգմանել է վրաց յայտնի բանաստեղծ Ա. Գրիշաշվիլին: Սա հմուտ հայերէնագէտ է. հայ մօր գաւակ է եւ ծագում է Թիֆլիսցի Մամուլաշվիլի ընտանիքից, որ հաւանաբար նոյնպէս ունի հայկական ծագում: Գրիշաշվիլի գրչին են պատկա-

նում երկու գեղեցիկ, հոգեկան անխառն ջերմութեամբ գրած աշխատութիւններ՝ Սայեաք Նովալի եւ հին Թիֆլիսի կեանքի մասին: Բացի այդ, Գրիշաշվիլին հրատարակել է Յ. Թումանեանի հատրնտիր ոտանաւորների եւ պատմաձփների մի հատոր վրացերէն քարգմանութեամբ:

